

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

MMR պատվաստանյութ (Կարմրուկ, խոզուկ և կարմրախտ): Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ:

Պատվաստանյութերի մասին շատ տեղեկատվական ձեռնարկներ հասանելի են իսպաներեն և այլ լեզուներով: Տես՝ www.immunize.org/vis:
Hojas de información sobre vacunas están disponibles en español y en muchos otros idiomas. Visite www.immunize.org/vis

1. Ինչու՞ պատվաստվել:

MMR պատվաստանյութը կարող է կանխել **կարմրուկը, խոզուկը և կարմրախտը:**

- **ԿԱՐՄՐՈՒԿԸ (Կ)** առաջացնում է ջերմություն, հագ, մրսածություն և կարմրություն, արցունքաբերություն, որոնց սովորաբար հաջորդում է ամբողջ մարմինը ծածկող ցանր: Սա կարող է հանգեցնել ցնցումների (հաճախ ջերմության), ականջի վարակների, փորլուծության և թոքաբորբի: Հազվադեպ դեպքերում կարմրուկը կարող է հանգեցնել գլխուղեղի ախտահարման կամ մահվան:
- **ԽՈՋՈՒԿԸ (Խ)** առաջացնում է ջերմություն, գլխացավ, մկանային ցավեր, հոգնածություն, ախտոժակի կորուստ, ինչպես նաև ականջների տակ թթազեղձերի այտուց: Սա կարող է հանգեցնել խլության, ուղեղի և/կամ ողնուղեղի թաղանթի բորբոքման, ամոթձիների և ձվարանների ցավոտ այտուցման, շատ հազվադեպ, մահվան:
- **ԿԱՐՄՐԱՄՏԸ (Կ)** առաջացնում է ջերմություն, կոկորդի ցավ, ցան, գլխացավ և աչքի բորբոքում: Այն կարող է առաջացնել հոդաբորբ դեռահասների և մեծահասակ կանանց կեսի մոտ: Եթե կինը հիվանդանում է կարմրախտով հղիության ընթացքում, կարող է տեղի ունենալ վիժում, կամ երեխան կարող է ծնվել լուրջ բնածին արատներով:

MMR-ով պատվաստված մարդկանց մեծ մասը պաշտպանված է ամբողջ կյանքի համար: Պատվաստանյութերի և պատվաստումների բարձր ցուցանիշները հանգեցրել են նրան, որ այս հիվանդությունները շատ ավելի քիչ են տարածված Միացյալ Նահանգներում:

2. MMR պատվաստանյութ

Երեխաներին անհրաժեշտ է MMR պատվաստանյութի 2 դեղաչափ, սովորաբար

- Առաջին դեղաչափը 12-ից մինչև 15 ամսական հասակում,
- Երկրորդ դեղաչափը 4-ից մինչև 6 տարեկան հասակում:

6-ից մինչև 11 ամսական հասակում Միացյալ Նահանգների սահմաններից դուրս գտնվող երեխաները պետք է ստանան MMR պատվաստանյութի դեղաչափ նախքան ճամփորդելը: Այս երեխաները պետք է նաև ստանան 2 լրացուցիչ դեղաչափ նախատեսված տարիքում՝ երկարատև պաշտպանության ապահովման համար:

Այլ տարիքային խմբի երեխաներին, ավագ տարիքի երեխաներին, դեռահասներին և մեծահասակներին նույնպես անհրաժեշտ են 1 կամ 2 MMR պատվաստանյութի դեղաչափ, եթե նրանք դեռևս չունեն կարմրուկի, խոզուկի և կարմրախտի իմունիտետ: Ձեր բժիշկը կարող է օգնել որոշել, թե քանի դեղաչափ է Ձեզ հարկավոր:

MMR-ի երրորդ դեղաչափը կարող է առաջարկվել որոշ մարդկանց խոզուկի համաճարակի բռնկման իրավիճակներում:

MMR պատվաստանյութը կարող է կիրառվել այլ պատվաստանյութերի հետ զուգահեռ: 12 ամսականից մինչև 12 տարեկան երեխաները կարող են ստանալ MMR պատվաստանյութը, ինչպես նաև մեկ ներարկումով ջրծաղկի դեմ պատվաստանյութը, որը հայտնի է որպես MMRV:

Ձեր բժիշկը կարող է Ձեզ տրամադրել ավելի մանրամասն տեղեկություններ:

3. Քննարկեք Ձեր բժշկի հետ:

Հարկավոր է զգուշացնել պատվաստում իրականացնողին պատվաստում ստացողի հետևյալ խնդիրների մասին

- Պատվաստվողը **ալերգիկ ռեակցիա է ունեցել MMR-ի կամ MMRV-ի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիաներ:**
- **Հղի է** կամ կարծում է, որ հղի է: Հղիները չպետք է ստանան MMR պատվաստանյութը:
- Ունի **թուլացած իմունային համակարգ** կամ ունի ժառանգական կամ բնածին իմունային համակարգի խնդիրներ ունեցող **ծնող, եղբայր կամ քույր:**
- Երբևէ եղել է **այնպիսի իրավիճակում, երբ հեշտությամբ ստացել է կապտուկ կամ ունեցել արնահոսություն:**
- Վերջերս ունեցել է **արյան փոխներարկում կամ ստացել է արյան հետ կապված դեղամիջոցներ:**
- **Թոքախտով** հիվանդ է:
- **Վերջին 4 շաբաթվա ընթացքում որևէ այլ պատվաստանյութ է ստացել:**

Որոշ դեպքերում Ձեր բուժող բժիշկը կարող է որոշել հետաձգել MMR պատվաստումը մինչև հաջորդ այցը:



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

Թեթև հիվանդություններով, ինչպիսին է մրսածությունը, մարդիկ կարող են պատվաստվել: Միջին կամ ծանր հիվանդություններ ունեցող մարդիկ MMR պատվաստում ստանալու համար պետք է սպասեն ապաքինմանը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Ձեր բժիշկին:

4. Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

- MMR պատվաստումից հետո կարող է առաջանալ ձեռքի ցավ, կարմրություն ներարկման վայրում: Հնարավոր է տենդ և թեթև ցան:
- MMR պատվաստումից հետո երբեմն առաջանում է այտերի կամ պարանոցի գեղձերի այտուցում կամ ժամանակավոր ցավ և հոդերի ջղաձգում (հիմնականում դեռահասների կամ մեծահասակ կանանց մոտ):
- Ավելի լուրջ ռեակցիաներ հազվադեպ են լինում: Դրանք կարող են ներառել ցնցումներ (հաճախ համադրված ջերմությամբ) կամ թրոմբոցիտների ժամանակավոր նվազում, որը կարող է առաջացնել անսովոր արյունահոսություն կամ կապտուկներ:
- Լուրջ իմունային համակարգի խնդիրներ ունեցող մարդկանց մոտ այս պատվաստանյութը կարող է առաջացնել վարակ, որը կարող է լինել կյանքին սպառնացող: Լուրջ իմունային համակարգի խնդիրներ ունեցող մարդիկ չպետք է ստանան MMR պատվաստանյութ:

Բժշկական միջամտություններից, այդ թվում նաև պատվաստումներից հետո, հնարավոր է ուշաթափություն: Տեղեկացրեք Ձեր բժիշկին, եթե ունեք գլխապտույտ, տեսողական փոփոխություններ և գնգոց ականջներում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, կա շատ փոքր հավանականություն, որ պատվաստանյութը կհանգեցնի ծանր ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասների կամ մահվան:

5. Ի՞նչ անել, եթե լուրջ խնդիր է առաջացել:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ պատվաստված անձի կլինիկական լքելուց հետո: Եթե նկատել եք ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, հաճախացած սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), հարկավոր է զանգահարել **9-1-1** և տուժածին տանել մոտակա հիվանդանոց:

Մտահոգիչ այլ նշանները հարկավոր է քննարկել բժշկի հետ:

Պատվաստանյութերի արդյունքում առաջացած անցանկալի ռեակցիաների մասին հարկավոր է տեղեկացնել պատվաստումների անցանկալի երևույթների մասին հաշվետվության համակարգին (VAERS): Սովորաբար այս զեկույցը ներկայացնում է Ձեր բժիշկը կամ կարող եք դա անել ինքներդ: Այցելեք VAERS-ի կայքէջ www.vaers.hhs.gov կամ զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: *VAERS-ը նախատեսված է բացառապես անցանկալի ռեակցիաների զեկույցման համար է, և VAERS-ի աշխատակազմը բժշկական խորհուրդներ չի տրամադրում:*

6. Պատվաստումների վնասի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստումների արդյունքում առաջացած վնասի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է որոշակի պատվաստումներից տուժած մարդկանց վնասի փոխհատուցման համար: Պատվաստումներից ենթադրյալ վնասների կամ մահվան արդյունքում առաջացած պահանջները ունեն ներկայացման ժամկետ, որը կարող է նույնիսկ լինել ընդամենը երկու տարի: Այցելեք VICP կայքը www.hrsa.gov/vaccinecompensation կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով՝ ծրագրի մասին տեղեկանալու և հայց ներկայացնելու համար:

7. Ինչպե՞ս ստանալ լրացուցիչ տեղեկություն:

- Զրուցեք Ձեր բժշկի հետ:
- Զանգահարեք Ձեր տեղամասային կամ նահանգային առողջապահական վարչություն:
- Պատվաստանյութի փաթեթավորման ներդիրները և այլ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են՝ Մանդի և դեղերի վարչության (FDA) կայքում հետևյալ հղումով՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Դիմեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ (CDC):
 - Զանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - այցելեք CDC-ի կայք հետևյալ հղումով՝ www.cdc.gov/vaccines:

Armenian translation of MMR VIS provided by California Department of Public Health, Immunization Program

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ և հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

DCH-0454A

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.